ՔԱՌԵԱԿՆԵՐ

Զեմ երգեր ես բնութիւն, արեւ, աստղեր ու լուսին,
Անիրական, անկենդան մտորումներ ցած ու սին.
Քայլերս ամուր են կառչած սրտին վրայ մայր երկրին,
Ու խոհերս չունին մուտք ծոցը կապոյտ երթերին:

Կ'երգեմ միտքը մարդկային՝ հանճարափայլ ու ներհուն,
Քերող՝ կապոյտն երկնքին, խորաչափող՝ վիհն ծովուն.
Կ'երգեմ հս սիրտը մարդուն՝ սիրոյ ովկիան լայնահուն,
Ճուտողիւնը մանուկին, ժպիտը լոյս՝ մայրերուն:

Եթէ կ'ուզես դուն երգել, քեզ նիւթ երբեք չի պակսիր,
Տիեզերքն է անսահման, խոհերդ՝ անթիւ ու անծիր.
Բայց 'թէ կ'ուզես խորանալ, պեղել սիրտը իրերուն,
Ինքզինքիդ հետ հանապազ հաշտ ու անկեղծ եղիր դուն:

Հազար ձայնով քերթողներ երգած են քեզ, Հայրենիք,
Անոնց վրայ ես ալ թող դնեմ իմ դրոշմն ու կնիք.
Հազար ձայնով, հազար հեղ երգած են սէրը կեանքին,
Աւելնայ ձայնը ալ թող այդ բազմանոխ համերգին:

Նման ըլլայ կեանքը իմ գուցէ գաւաթ մը ջուրի,
Ուր նետուած ափ մը շաքարն դեռ կը մնայ յատակին.
Մեծ մասն արդէն ըմպեցի, անոյշ համը բայց չառի,
Շաքարն վերջին օրերուս գոնէ հպէր իմ քիմքին:

1985 Գ. ՃԱՐՏԱՐ

digitised by A.R.A.R.@